ՀՈԳԵՎՈՐ

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

### «…ՀԱՍԿԱՆԱՆՔ ՄԵՐ ՍԽԱԼԸ ԵՎ ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՂԻ»



***Անցած կիրակի՝ մարտի 5-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, հավարտ կիրակնօրյա Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Սուրբ Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցի կապակցությամբ: Ներկայացնում ենք Հայր Սուրբի խոսքի համառոտ տեքստը:***

*- Իրապես, Ներսես Շնորհալին այն ուժեղագույն մարդկանցից է, որը կարողացավ հզորացնել Հայոց կաթողիկոսությունը, չնայած այն գտնվում էր Հայաստանից դուրս: Նա միշտ ձգտել ու քարոզել է, որ կաթողիկոսությունը նորից տեղափոխվի Սուրբ Էջմիածին: Շնորհալին այն Հայրապետներից էր, այն կաթողիկոսներից, ով կարողացավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հզորությունը բարձրացնել եւ հասցնել հռոմեական կաթոլիկ, լատին, Կոստանդնուպոլսի Ուղղափառ եկեղեցու հզորությանը՝:*

*Այսօր, կարծես թե, սիմվոլիկ է դարձել Ներսես Շնորհալու հիշատակությանն ուղղված Կոնդակի ընթերցումը, եւ մեր Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից հաստատված «Անառակի կիրակի» օրվա խորհուրդը: Այս կիրակիի խորհուրդն է հրավերքը, որ ամեն մեկս զղջանք, հասկանանք մեր սխալը եւ վերադառնանք ճշմարիտ ուղի: Այսօր այն օրն է, երբ ամեն մեկս պետք է գիտակցենք, թե որքանով կարեւոր է, որպեսզի մեր բարեկամը, հարազատը, ընկերը, ով որեւէ պատճառով հեռացել է Աստծուց, վերադառնա դեպի եկեղեցին, վերադառնա դեպի իր հավատքը: Այսօր այն օրն է, երբ Աստված ձեռքերը բաց, գրկաբաց սպասում է բոլորիս: Եվ մնում է, որ մենք մեր քայլը կատարենք ու գնանք դեպի Աստված: Այսօր այն օրն է, երբ Աստված ասում է մարդուն՝ եկ, ես քեզ ուզում եմ ողջունել, եւ մնում է, որ մենք մեր քայլը կատարենք ու ողջագուրվենք մեր Տիրոջ հետ:*

*Ամեն անգամ, երբ հիշատակում ենք, հիշում եմ մեծն նկարիչ Վան Գոգի նկարը՝ նվիրված Անառակ որդու վերադարձին, որտեղ հայրը գրկում է իր որդուն: Նրա ձեռքերն անչափ մեծ են: Դա նկարիչը հատուկ է արել, որպեսզի ցույց տա, թե հայրը որքան սիրով է ընդունում նույնիսկ այն որդուն, ով իրենից հեռացել է, իր քրտինքով վաստակած հարստության կեսը վատնել է, ապրել անառակ կյանքով, սակայն հետո զղջացել ու վերադարձել է իր ընտանիք:*

*Յուրաքանչյուր հայր պետք է ների իր զավակին եւ ընդունի: Պատկերացրեք, եթե մենք՝ այս երկրի վրա ապրողներս, կարող ենք ներել զավակին եւ ընդունել նրան, նույնքան ավելի կարող է ընդունել եւ ներել մեր Տեր Աստվածը…*

ՄԱՐՏԻ 8-Ը՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



*Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա առիթով «Վրաստան» թերթը շնորհավորում է բոլոր մայրերին, քույրերին, կյանքի բեռը տղամարդկանց հետ հավասարաչափ իրենց ուսերին առնող ու երբեք չընկճվող, կյանքը թարմացնող ու գեղեցկացնող բոլոր կանանց, մաղթում քաջառողջություն, կանացի երջանկություն: Սիրելի կանայք, երջանիկությունը ձեզ ուղեկից:*

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ. ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Կանանց միջազգային օրվա առիթով Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, փոխքաղաքապետ Մկրտիչ Մղդեսյանն ու ինքնակառավարման միավորների այլ ներկայացուցիչներ, քաղաքապետարանի վարչական շենքի դահլիճում հյուրընկալեցին սակրեբուլոյում եւ քաղաքապետարանի վերահսկողության տակ գտնվող ծառայություններում աշխատող կանանց:*



Մարտի 8-ի առիթով քաղաքապետը շնորհավորեց կանանց, հաջողություն մաղթեց, ապա աշխատակիցների հետ միասին ծաղկեփնջեր նվիրեց նրանց:

- Սիրելի կանայք, շնորհավորում եմ Կանանց միջազգային օրվա առիթով: Մաղթում եմ ձեզ առողջություն եւ հաջողություններ անձնական կյանքում ու հասարակական գործունեության մեջ: Ինձ շատ գոհացնում է այն, որ մեր ծառայության աշխատակիցների մեծ մասը կանայք են: Մաղթում եմ ձեզ հաջողություն եւ մեծ երջանկություն,- ասաց Մելքոն Մակարյանը:

## ՆԻՆՈԾՄԻՆԴԱ. ԱՆՋԿԱՑՎԵՑ ՏԵՂԱՑԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

*Մարտի 7-ին Նինոծմինդայի Մշակույթի տանը կազմակերպվեց տեղացի հինգ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը նվիրված էր Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին:*



Ցուցահանդեսը բացեց Նինոծմինդայի քաղաքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի, հուշարձանների պահպանության, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության զարգացման վարչության պետ Լեւոն Վարդանյանը:

Միջոցառմանը ներկա էին Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը եւ քաղաքապետարանի մի շարք աշխատակիցներ:

- Շատ հետաքրքիր ցուցահանդես է, եւ մեզ համար, անշուշտ, մեծ պատիվ է լինել նման ցուցահանդեսի հյուրընկալը,- ասաց Անի Մոսոյանը:

## ՎՐԱՍՏԱՆԻՑ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԾԱՂԻԿ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

***2022 թվականին Վրաստան է ներկրվել ռեկորդային ծավալի՝ 1203 տոննա 3 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ տարբեր տեսակի ծաղիկներ: Վրաստան ծաղիկներ է ներկրվել 13 երկրներից, որոնց թվում առաջինը Հայաստանն է: Լավագույն հնգյակում են Էկվադորի, Նիդերլանդների, Թուրքիայի եւ Քենիայի ծաղիկ մատակարարողները:***

Ինչ վերաբերում է կոնկրետ թվերին, ապա հաշվետու ժամանակահատվածում Հայաստանից Վրաստան է ներկրվել 432 տոննա ծաղիկ, ընդհանուր առմամբ՝ 1,2 միլիոն դոլար արժողությամբ: Էկվադորից՝ 198 տոննա (584 հազար դոլար), Նիդերլանդներից՝ 39 տոննա (495 հազար դոլար), Թուրքիայից՝ 443 տոննա (379 հազար դոլար), Քենիայից՝ 73 տոննա (231 հազար դոլար):

Վրաստան ծաղիկ ներկրող երկրների ցանկը եզրափակում են Հնդկաստանը, Ադրբեջանը, Իրանը, Կոլումբիան, Եթովպիան, Չինաստանը, Մեծ Բրիտանիան եւ Ռուսաստանը:

2021 թվականի համեմատ, անցյալ տարի ներկրած ծաղիկների ծավալն ավելացել է 36,9 տոկոսով, իսկ ընդհանուր արժեքը՝ 34,3 տոկոսով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՋՈՂԱԿ ԿՆՈՋ ՀԵՏ

# «ՏՎԵՔ ԻՆՁ ԿԻՐԹ ՈՒ ԽԵԼԱՑԻ ՄԱՅՐԵՐ՝ ԵՍ ՁԵԶ ԿՏԱՄ ԿԻՐԹ ՈՒ ԽԵԼԱՑԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ…»



***5-րդ դարի հայ պատմիչ Եղիշեի խոսքերն են: Այդ օրերից ի վեր, առաջ, առայսօր ու առանց մինչեւի, յուրաքանչյուր ազգ ու ժողովրդի կյանքում ոչինչ չի փոխվել ու չի փոխվելու: Եթե ոչ հաճախ, ապա միշտ Մայրն է պայմանավորելու մարդկային կյանքի բարոյահոգեբանական արժեհամակարգն ու իր հոգու գեղեցկությամբ փրկելու աշխարհը:***

***Մարտի 8-ի տոնին նախորդող Մարտի 3-ը՝ իբրեւ Մայրության օր, Վրաստանում առաջին անգամ նշվեց 1991 թվականին, նախագահ Զվիադ Գամսախուրդիայի սահմանմամբ: Սա պետության կողմից պաշտոնական հարգանքի ամրագրում էր այն Մայրերի նկատմամբ, ում համար մայրությունը լոկ կենսաբանություն կամ բնազդ չէ, այլեւ առանձին մասնագիտություն: Ու նույնիսկ հասարակական-պետական գործունեություն, որի հիմքում կիրթ, պատասխանատու, գիտակից մոտեցումը ապագայի տեսլականն են:***

***Տարվա ամենագեղեցիկ՝ Մարտի 3 ու 8-յան առիթների մեր զրուցակիցը Սառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելիի հանրային դպրոցի Միրզոեւկայի հայկական մասնաճյուղի՝ մանկավարժ Նոնա Արոսյանն է: Խոսել ենք կնոջ դերն ու ուժը փաստող նրա կենսուղու մասին:***

***- Շնորհավոր, սիրելի Նոնա, ինչպե՞ս նշեցիք Մարտի 8-ը:***

- Ինչպես մյուս բոլոր տոնական օրերը՝ ընտանեկան ջերմ մթնոլորտում: Կարծում եմ՝ յուրաքանչյուր կնոջ համար ամենամեծ պարգեւն է, երբ տոնական օրերին ընտանիքի անդամները շտապում են տուն եւ՝ ոչ հակառակը: Համենայնդեպս, տղաներս դեռ ամուսնացած չեն, նրանց ծաղկեփնջերն առաջինը վայելելու առավելությունը դեռ իմն է:

***- Իսկ Ձեր ծաղկեփո՞նջը…***

- Հասցեատերը եղել ու մնում է Մայրիկս: Աղջիկներիս գործն այդ առումով հեշտ ու անշեղ է:

***- Ովքե՞ր են Ձեր տան «աղջիկները»:***

- Եթե մեկ բառով, ապա՝ սյունս, հպարտությունս: Առաջինը՝ մայրս, երկրորդը՝ քույրս է: Երեքս էլ աշխատում ենք Միրզոեւկա գյուղի դպրոցում՝ ապրելով հարեւանությամբ գտնվող Ծերեթելի գյուղում: Մայրս՝ Էլմիրա Թարզյանը, հայոց լեզվի եւ գրականության երկար տարիների, այժմ արդեն ավագ ուսուցիչ է: Մինչ այդ, աշխատել է Նինոծմինդայի շրջանի Ուչմանա գյուղում, ապա՝ Կարմիրգյուղում: Քույրս՝ Դիանա Արոսյանը, առաջատար ուսուցիչ է: 2020 թվականին նա ճանաչվեց Քվեմո-Քարթլիի լավագույն ուսուցիչը: Դիանան ավարտել է Թբիլիսիի պետական ագրարային համալսարանը, ընդ որում՝ Կարմիր դիպլոմով ե՛ւ բակալավրը, ե՛ւ մագիստրատուրան: Այսքանը…

***- Իսկ այն «աղջի՞կը», ում հետ զրուցում եմ, պատմեք մի փոքր Ձեր մասին…***

- Չեմ սիրում ինքս իմ մասին պատմել, բայց դե, փորձեմ: Ծնվել եւ մեծացել եմ Ծերեթելի գյուղում: Միրզոեւկայի հայկական դպրոցի 9-րդ դասարանն ավարտելուց հետո, ուսումս շարունակել եմ Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցում: Ավարտելուց հետո ընդունվել եմ Թբիլիսիի պետական ագրարային համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Երրորդ կուրսից սկսել եմ աշխատել Միրզոեւկայի հայալեզու դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Քանի որ արդեն աշխատում էի դպրոցում, մեծ ցանկություն ունեի նաեւ մանկավարժական կրթություն ունենալ: Արդեն Հայաստանում, Հյուսիսային համալսարանում, ստացա մանկավարժության մագիստրոսի որակավորում: Ուսուցչությանը

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՋՈՂԱԿ ԿՆՈՋ ՀԵՏ

# «ՏՎԵՔ ԻՆՁ ԿԻՐԹ ՈՒ ԽԵԼԱՑԻ ՄԱՅՐԵՐ՝ ԵՍ ՁԵԶ ԿՏԱՄ ԿԻՐԹ ՈՒ ԽԵԼԱՑԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ...»

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

զուգահեռ, 2008 թվականից աշխատել եմ որպես թրեյնինգավար, ինչպես ԱՈՒՊ (ազգային ուսումնական պլան) արմատավորման կենտրոնում, այնպես էլ՝ ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնում: Այժմ թրեյնինգավար եմ USAID բազային կրթության ծրագրում: Զուգահեռ զբաղվում եմ նաեւ թարգմանությամբ՝ վրացերենից հայերեն:

*- Հաճախ է լինում, որ մայրաքաղաք Թբիլիսի եւ կամ Հայաստան ուսումնառության մեկնելուց հետո, ու մանավանդ՝ նման կրթությամբ, գյուղ չեն վերադառնում:*

- Ցավոք, այո, բայց իրականում հենց նման մասնագետների կարիք ունի այսօր գյուղը՝ հայաբնակ, թե վրացաբնակ: Հայաստանից հաստատ կվերադառնայի, քանի որ Վրաստանի հետ շատ եմ կապված, որտեղ էլ լինեմ մեծ սիրով եմ վերադառնում: Երկրի պետական լեզուն՝ վրացերենը, սկսել եմ սովորել դեռեւս դպրոցում, որովհետեւ իմ գործունեությունը պատկերացնում էի հենց Վրաստանում, իսկ եթե կա ցանկություն, ապա բոլոր բարդությունները շատ հեշտ է հաղթահարել: Չկա՝ չեմ կարող, կա՝ չեմ ուզում: Ինչ վերաբերում է առաջխաղացմանը, ապա այն ինքնըստինքյան բարդ է, որտեղ էլ՝ լինես: Իհարկե, շրջանում կամ գյուղում գտնվելը հավելյալ խոչընդոտներ է առաջացնում, սակայն չեմ կարող ասել, որ առաջխաղացման հարցում շրջանի եւ քաղաքի միջեւ տարբերությունը շատ մեծ է: Եթե ցանկանում ես ինչ որ բանի հասնել, որտեղ էլ լինես, պետք է պատրաստ լինես տքնաջան աշխատել:

*- Ինչպե՞ս եք համատեղում տունն ու աշխատանքը, ինչպիսի՞ն է Ձեր պատկերացմամբ կինը:*

- Կինն ինձ մոտ ասոցացվում է հանգստության եւ կայունության հետ, ինչպիսին մայրս է: Ցավոք, Վրաստանում, ինչպես նաեւ Հայաստանում ու շատ երկրներում, դեռեւս կան կարծրատիպեր, որոնք խանգարում են կանանց հաջողությունների հասնել: Բայց անձամբ ես տունն ու աշխատանքը երբեք չեմ դժվարացել համատեղել, անչափ սիրում եմ երկուսն էլ, իսկ եթե սիրում ես, ապա համատեղելու հարցում խնդիրներ չեն առաջանում: Մանավանդ, երբ ընտանիքդ աջակցում է քեզ այդ հարցում: Կայացած կին, ուրեմն՝ կայացած ընտանիք: Սա նաեւ ամուսնուս, տղաներիս դիրքորոշումն է:

***- Զարմանալիորեն նոր եմ պարզում, որ մեր Էդգար Մազմանյանի մայրն եք (ընթերցողին հիշեցնեմ, որ հատկապես համավարակի օրերին «Վրաստանի» իր հրապարակումներում Էդգարը ներկայացնում էր Մառնեուլիի մունիցիպալիտետում տիրող իրավիճակը) ու դեռ ավելին, ասում են՝ մեծ հաջողություններ է գրանցում նաեւ Ձեր կրտսեր տղան՝ Վլադիմիրը: Խնդրում եմ, բացեք գյուղում հաջողակ ու քաղաքում մրցունակ երիտասարդ մեծացնելու գաղտնիքը:***

- Տղաներս՝ Էդգար եւ Վլադիմիր Մազմանյանները, երկուսն էլ ծնվել ու մեծացել են գյուղում: Երկուսն էլ ոսկե մեդալակիր են, այժմ՝ Թբիլիսիի պետական համալսարանի ուսանող: Էդգարը միջազգային հարաբերություններ ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող է, ստանում է կրթաթոշակ: Սովորելուն զուգահեռ, նաեւ աշխատում է Կարմիր խաչում եւ մի շարք այլ կազմակերպություններում, չնայած իր երիտասարդ տարիքին, ունի նաեւ թրեյնինգավարի փորձ: Փոքր տղաս՝ Վլադիմիրը, նախորդ տարում է ավարտել դպրոցը եւ ընդունվել նույն համալսարանը: Աշխատում է TBC բանկում, ծրագրավորող է: Բանկի ամենաերիտասարդ աշխատակիցներից մեկն է, հոկտեմբերին է լրացել 18 տարին: Երկուսն էլ նվագում են տարբեր երաժշտական գործիքների վրա, Էդգարը՝ կիթառ, Վլադիմիրը՝ հարվածային, ակտիվ զբաղվում են սպորտով:

- Գիտեմ, որ չկա ծնող, ով չի սիրում իր երեխային, սակայն սիրո հետ միասին, իմ կարծիքով, անհրաժեշտ է վստահություն: Անսահման վստահություն եւ անկեղծ հավատ, որ նրանք ամեն ինչ կարող են: Եթե հարցնում եք, ո՞րն է հաջողակ երեխաներ մեծացնելու իմ գաղտնիքը, ապա ես միայն մի պատասխան ունեմ՝ ճիշտ պահին լինել երեխայի կողքին եւ, եթե ողջ աշխարհն էլ պնդի, որ ինչ-որ բան չի ստացվելու, թույլ չտալ, որ երեխան հավատա դրան:

***- Երբեւէ մտածե՞լ եք, թե ո՞վ է լինելու Ձեր տան հարսը...***

- Երբեք չեմ մտածել այդ ուղղությամբ, սակայն, ինչպես մյուս բոլոր հարցերում, այս հարցում նույնպես լիարժեք վստահում եմ տղաներիս, նրանց ցանկացած ընտրություն ինձ համար ընդունելի կլինի:

***- Եվ վերջում, ո՞րն է անձամբ Ձեր հաջողության գաղտնիքը, ի՞նչ խորհուրդ կարող եք տալ աղջիկներին, կանանց:***

- Հաջողության ոչ մի գաղտնիք չունեմ, ուղղակի շատ աշխատասեր ու լավատես եմ, սիրում եմ կյանքն իր բոլոր գույներով: Իսկ բոլոր կանանց եւ աղջիկներին խորհուրդ կտամ վստահել սեփական ուժերին ու հավատալ, որ ցանկության դեպքում իրենց մոտ ամեն ինչ կստացվի:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ՄԵՐ ԱՆՎԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ. ՆՐԱՆՔ ԱՅՍՕՐ ԿԼԻՆԵԻՆ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐ

# «ԹԻՖԼԻՍԻ ԾՈՑԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԲԱԲԿԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ...»



***Այս բառերը գրականագետ, թատերագետ Ռուբեն Զարյանինն են, ով Բաբկեն Ներսիսյանին (1917-1986) համարում է «հայ-վրացական թատերական արվեստի կամուրջն ու Հայաստանի արվեստասեր հանդիսատեսի սիրելին: Յուրահատուկ խորությամբ, լուրջ դերերի ծանրությամբ բնորոշվող դերասան, ով մեծ ավանդ ունի մայր թատրոնի ծաղկման գործում...»:***

Բաբկեն Ներսիսյանը ծնվել է վրաց մայրաքաղաք Թիֆլիսում: Իր անհատականությամբ հետագայում հայ թատրոնի սյուներից մեկը խորհրդանշող դերասանը՝ բեմարվեստ ոտք դրեց 40-ական թվականներին Թբիլիսիի Պատանի հանդիսատեսի թատրոնում, երբ տասնհինգ տարեկան էր: Նկատելով, ի դեպ, արդեն դպրոցից Թբիլիսիի հայկական պետական դրամատիկական թատրոնի ներկայացումների մասսայական տեսարաններին մասնակցող պատանու բնածին բեմական տաղանդը՝ արվեստագետները նրան անվանեցին «թատրոնի սիրտ» եւ կանխատեսեցին փայլուն ապագա: Եվ չսխալվեցին...

Մասնագիտական կրթություն չստացած դերասանի համար բարձրագույն համալսարան դարձավ Թբիլիսիի (այն ժամանակ Ստ.Շահումյանի, այժմ՝ Պ.Ադամյանի անվան) Հայկական դրամատիկական թատրոնը: Երիտասարդ դերասանին բախտ վիճակվեց նույն բեմում խաղալ Մեծն Վահրամ Փափազյանի հետ: Ռեժիսորներ Ա.Աբարյանի, Ս.Քափանակյանի հետ համատեղ աշխատանքի արդյունքում եւ թատրոնի դերասանական կազմի հետ ուսանելի շփումների շնորհիվ: 1944-1956 թվականներին նա թբիլիսյան բեմում կերտեց Պեպո (Գ.Սունդուկյան՝ «Պեպո»), Միքայել (Շիրվանզադե՝ «Քաոս»), Կարապետ Մինայիչ (Մ.Քոչարյան՝ «Հարազատ մարդիկ»), Կարլ եւ Ֆրանց Մոոր (Շիլլեր՝ «Ավազակներ») եւ հանդիսատեսի կողմից սիրված այլ կերպարներ:

Այդ շրջանում թատրոնի դերասան Աշոտ Քաջվորյանի հետ Բաբկեն Ներսիսյանը գրեց «Աղասի» դրաման՝ ըստ Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, որը բեմադրվեց 1947թվականին:

1956-ին, հայ անվանի թատերական գործիչ, ռեժիսոր Վարդան Աճեմյանի (1905-1977) հրավերով, Բաբկեն Ներսիսյանը տեղափոխվում է Երեւան, շարունակում գործունեությունը Գ.Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում՝ այդ շրջանի բեմարվեստի կուռքերի՝ Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Վաղարշ Վաղարշյանի, Գուրգեն Ջանիբեկյանի, Ավետ Ավետիսյանի հետ: Լայն դիապազոնի դերասանին այստեղ էլ հաջողվեց հանդես գալ ամենատարբեր՝ բնութագրական, դրամատիկական, ողբերգական դերերով. Նազար՝ «Քաջ Նազար», Աբիսողոմ աղա՝ «Մեծապատիվ մուրացկաններ», Պեպո՝ «Պեպո», Միքայել՝ «Էլի մեկ զոհ», Օսեփ՝ «Քանդած օջախ», Բեն Ալեքսանդր՝ «Իմ սիրտը լեռներում է», Արա Գեղեցիկ՝ «Արա Գեղեցիկ», Արտավազդ՝ «Արտավազդ եւ Կլեոպատրա», Գեւորգ՝ «Նույն հարկի տակ», Տիգրան՝ «Վերջին մեխակներ», Պեպինո՝ «Շաբաթ, կիրակի, երկուշաբթի», Միքայել՝ «Քաոս» ներկայացումներում:

Բաբկեն Ներսիսյանը հիշարժան կերպարներ է կերտել նաեւ հայկական բազմաթիվ սիրված ֆիլմերում. Մարութխանյան («Քաոս»), Ծատուրյան («Կամոյի վերջին սխրանքը»), Սյուրմեյան («Սարոյան եղբայրներ»), Մսյո Ժակ («Մսյո Ժակը եւ ուրիշները»), Աբբաս Միրզա («Հյուսիսային ծիածան»), Բալյան («Թռիչք անդունդի վրայով»), Բաբլոեւ («Ում է ժպտում կյանքը»), Սայաթ-Նովա («Սայաթ-Նովա»): Ներսիսյանի կերպավորած հանճարեղ բանաստեղծին ու աշուղ երգչին անհնար է պատկերացնել այլ կերպ, քան Բաբկեն Ներսիսյանական Սայաթ- Նովան է:

Մեր հայրենակցի՝ Բ.Ներսիսյանի մասին, խոսել են ու դեռ երկար կխոսեն թատերագետները: Արվեստագետ, որի նմանների ծարավը՝ այս էլ երբվանից, ունենք ազգովի:

*Պատրաստեց ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*

# ԿԱՐՊ ԽԱՉՎԱՆՔՅԱՆ. ԾԻԾԱՂԻ ՄԵԾ ՎԱՐՊԵՏԸ

***Ուղիղ 100 տարի առաջ՝ 1923թ. հունվարի 23-ին, Վրաստանի Ախալցիխե քաղաքում ծնվեց կատակերգության արքան՝ Կարպ Խաչվանքյանը:***



Նա տասնամյակներ շարունակ հանդիսատեսին պարգեւել է ժպիտ ու ծիծաղ՝ ի պատասխան ստանալով նրա անսահման սերն ու գնահատականը: Ժամանակակիցների ու նաեւ իր հորեղբոր որդու՝ «Վրաստան» թերթի երկարամյա եւ հմուտ թարգմանիչ լուսահոգի Մարտունի Խաչվանքյանի հուշերում՝ բեմի հաղթական ասպետը, հանդիսատեսի կուռք դարձած Կարպ Խաչվանքյան դերասանը, իրական կյանքում աննկատ քաղաքացի, սքանչելիորեն անճարակ ինտելիգենտ Խաչվանքյան Կարպն էր... Համեստ ու իր համեստության մեջ զարմանալիորեն շլացուցիչ:

1941-1944 թվականներին Կ.Խաչվանքյանը սովորել է Թբիլիսիի կինոստուդիային կից դերասանական դպրոցում, 1944-ից տեղափոխվել է Երեւան եւ 54 տարի խաղացել Երեւանի Հ.Պարոնյանի անվան Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում:

Ավելի քան մեկ հիսունամյակ, այդ բեմին, նա կերտեց իր նախադեպը չունեցող, մինչ այսօր անզուգական եւ անփոխարինելի կատակերգական կերպարները. Ալդեմարոն՝ Լոպե դո Վեգայի «Պարերի ուսուցիչը», Նիկոն՝ Հ.Պարոնյանի «Ատամնաբույժն արեւելյան», Պետրուչիոն՝ Շեքսպիրի «Կամակոր կնոջ սանձահարումը», Տոնինո եւ Զանետտոն՝ Գոլդոնի «Վենետիկյան երկվորյակները» բեմադրություններում:

Հանդիսատեսի համար տոնական օր էր այն օրը, երբ նա էր բեմում. «Այսօր Խաչվանքյանը բեմո՞ւմ է,- ասես, հավաստիանալու համար, նրանք նորից ու նորից հարցնում էին հսկիչին...»: Իսկ դա նշանակում էր բազմամարդ դահլիճ, որտեղ ասեղ գցելու տեղ չկար: Դա նշանակում էր որոտալի ծափեր: Դա նշանակում էր ծիծաղի հրավառություն... Կարպ Խաչվանքյանը վախճանվեց 1998թ., Երեւանում:

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ




## ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Մարտի 6-ին եւ 7-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բրիս Ռոքֆոյի եւ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Լուիս Բոնոյի հետ:*

Հանդիպումներում Հայաստանի վարչապետը զրուցակիցների ուշադրությունը բեւեռեց մարտի 5-ին Ադրբեջանի Զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացված դիվերսիոն հարձակման փաստին: Նիկոլ Փաշինյանը հավելեց, որ Ադրբեջանը մի կողմից հայտարարում է ԼՂ ներկայացուցիչների հետ երկխոսելու պատրաստակամության մասին, մյուս կողմից իրականացնում է ահաբեկչական գործողություններ, ինչի հետեւանքով երեք օր առաջ զոհվել են ԼՂ ներքին գործերի նախարարության ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության երեք ծառայող, մեկը վիրավորվել է:

Կարեւորվեց Արդարադատության միջազգային դատարանի կողմից Լաչինի միջանցքն ապաշրջափակելու վերաբերյալ որոշման՝ Ադրբեջանի կողմից անհապաղ կատարելու անհրաժեշտությունը:

Քննարկվեցին նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին վերաբերող հարցեր:

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Է

*Հայաստանը 2023 թվականի հունվարին արտահանել է 572 մլն 778.3 հազար դոլարի ապրանք, որը 2,3 անգամ գերազանցում է նախորդ տարվա հունվարի ցուցանիշը:*

Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Հայաստանը հունվարին ամենաշատ արտահանումն իրականացել է դեպի Ռուսաստան՝ 354 մլն 925,1 հազար դոլարի, ինչը, նախորդ տարվա հունվարի համեմատ, աճել է 5,2 անգամ: Արտահանման ծավալներով երկրորդ տեղում Արաբական Միացյալ Էմիրություններն է՝ 46 մլն 563 հազար դոլարի ապրանք, նախորդ տարվա հունվարի համեմատ, այն աճել է 14,1 անգամ: Այնուհետեւ ամենաշատ արտահանումն իրականացվել է Չինաստան՝ 40 մլն 458,4 հազար դոլարի՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12 տոկոսով:

Հայաստանից մեծ ծավալով արտահանում է իրականացվել նաեւ դեպի Նիդերլանդներ՝ 30 մլն 175 հազար դոլարի, 2022-ի հունվարի համեմատ ցուցանիշն աճել է 29,5 տոկոսով: 25,5 տոկոսով աճել է նաեւ Իրաք արտահանումը՝ կազմելով 19 մլն 563,5 հազար դոլար:

Հարեւան Վրաստան արտահանումը 2023 թվականի հունվարին նվազել է 11,5 տոկոսով՝ կազմելով 6 մլն 591,9 հազար դոլար:

Հայաստանից արտահանվում են հանքահումքային արտադրանք, թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից պատրաստված իրեր:

## ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ Է ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԵՐ

*Եվրասիական տնտեսական միությունում (ԵԱՏՄ) գյուղատնտեսական արտադրանքը, 2022 թվականի տվյալներով, աճել է 9,4 տոկոսով եւ կազմել 11,5 տրիլիոն ռուբլի: Հացահատիկի բերքի աճի մակարդակով Հայաստանն առաջատարի դիրքերում է:*

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) նախնական տվյալների համաձայն, ԵԱՏՄ-ում հացահատիկի համախառն բերքը կազմել է գրեթե 187 մլն տոննա, ինչը մոտ 27 տոկոսով ավելի է նախորդ տարվա համեմատ: Բերքահավաքի զգալի ավելացում է արձանագրվել Միության բոլոր երկրներում եւ պայմանավորված է բերքատվության աճով:

Հայաստանում հացահատիկի բերքն աճել է գրեթե 58 տոկոսով, Ղրղզստանում՝ 36, Ղազախստանում՝ 34,5, Ռուսաստանում՝ գրեթե 27, Բելառուսում՝ 19 տոկոսով: Ավելացել է նաեւ շաքարի ճակնդեղի բերքը՝ 2, կարտոֆիլի բերքը՝ 4,6, բանջարեղենինը՝ 1 տոկոսով:

ԵԱՏՄ-ում գյուղատնտեսական արտադրանքը 2022 թվականին աճել է 9,4 տոկոսով եւ կազմել 11,5 տրիլիոն ռուսական ռուբլի: Դրական դինամիկան կապված է հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի, առաջին հերթին՝ հացահատիկային մշակաբույսերի եւ լոբազգիների բերքի ավելացման հետ:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԿԱՐՄՐՈՒԿԻ 46 ԴԵՊՔ

*Մարտի 10-ի դրությամբ, Հայաստանում կարմրուկի լաբորատոր հաստատված դեպքերի թիվը հասել է 46-ի:*

Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, նրանցից 22-ը հոսպիտալացվել են, 14-ը չեն հոսպիտալացվել, 10 հոգի դուրս է գրվել: Հիվանդների առողջական վիճակը գնահատվում է միջին ծանրության, երկուսինը՝ ծանր: 46 վարակվածից 43-ը պատվաստված չէ, 3-ը պատվաստված է մեկ դեղաչափով:

Առողջապահության նախարարությունը հիշեցնում է, որ պատվաստումների ազգային օրացույցով կարմրուկի դեմ պատվաստումները նախատեսված են 1 եւ 4-6 տարեկան երեխաների համար:

Նշենք, որ Հայաստանում գտնվող օտարերկրացիները եւս կարող են անվճար պատվաստվել կարմրուկի դեմ:

## ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆԸ

*Հայաստանի հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով կատարված նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Երեւանի փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանը, 2020-2022 թթ. ընթացքում զբաղեցնելով Հայաստանի առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը, ելնելով անձնական շահագրգռվածությունից՝ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որի հետեւանքով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին:*



Ըստ քրեական վարույթով ձեռքբերված տվյալների, «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» իրականացման ծրագրով Հայաստանի կառավարությունը հատկացրել է ավելի քան 26 մլրդ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է Հայաստանի կառավարության պահուստային ֆոնդից: Հիշյալ ծրագրի շրջանակում, Հայաստանի առողջապահության նախարարի 2020թ. հրամանով հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության «COVID-19»-ի ախտորոշման եւ բուժման դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստացող՝ բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը, որում ներառվել է նաեւ «Մեդլայն Կլինիկ» ՍՊ ընկերությունը:

«Առողջապահության նախարարի հրամանի համաձայն, նախարարի տեղակալ Գ. Սիմոնյանին հանձնարարվել է իրականացնել կորոնավիրուսային հիվանդության համար անհրաժեշտ բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների համակարգումը: Միաժամանակ, նախարարության թոքաբանության եւ տուբերկուլոզի գծով խորհրդատու, գերատեսչության «Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության դեղակայուն բաժանմունքի վարիչ Լ.Ե.-ն նշանակվել է COVID 19 հիվանդությամբ հաստատված բուժառուների տեսակավորման եւ հիվանդանոցային պայմաններում բուժում ստացող եւ դուրսգրման ենթակա բուժառուների տրիաժի (դուրսգրման տրիաժ խմբերի) պատասխանատու:

Առողջապահության նախարարի տեղակալ Գ. Սիմոնյանը, նախարարի հրամանով, պատասխանատու լինելով վերը նշված ծրագրի ֆինանսավորման համակարգման համար, չի կատարել իր վրա դրված պարտականությունները: Գ. Սիմոնյանի հիշյալ գործողությունների արդյունքում, «Մեդլայն կլինիկ» ՍՊ ընկերության տնօրեն Բ.Շ.-ն հնարավորություն է ստացել նախնական համաձայնությամբ խարդախության եղանակով հափշտակել առանձնապես խոշոր չափերի՝ 119.005.000 ՀՀ դրամ»,- նշված է հաղորդագրության մեջ:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



***Հայաստանի ազգային հերոս, պետական եւ ռազմական գործիչ Վազգեն Սարգսյանի ծննդյան 64-րդ տարեդարձի կապակցությամբ, մարտի 5-ին Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, գերատեսչության ղեկավար կազմի ուղեկցությամբ, այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն:***

***Սուրեն Պապիկյանը եւ բարձրաստիճան զինվորականները հարգանքի տուրք են մատուցել եւ ծաղիկներ խոնարհել սպարապետ Վազգեն Սարգսյանի, ինչպես նաեւ հայրենիքի պաշտպանության ընթացքում իրենց կյանքը զոհաբերած հայորդիների շիրիմներին:***

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՇԻՆԱՐԱՐԻՆ



***Քուվեյթի գիտական ակումբի եւ Ժնեւի միջազգային ցուցահանդեսի միջեւ համագործակցությամբ, 2023 թվականի փետրվարի 12-15-ը Քուվեյթում կայացած Մերձավոր Արեւելքում գյուտերի (հայտնագործությունների) 13-րդ միջազգային ցուցահանդես-մրցույթին, համալսարանի Շինարարական արտադրության տեխնոլոգիայի ու կազմակերպման ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր շինարար Վարդգես Գրիգորյանի «Ֆիքսատորներ մետաղական ամրանների համար» գյուտը արժանացել է արծաթե մեդալի:***

***Պրոֆեսոր Գրիգորյանը հեղինակ է 21 գյուտի, 165 գիտական հոդվածների եւ 16-ից ավելի մասնագիտական գրքերի:***

## ՍԿՍՎԵԼ Է ՔԱՐԻՆՋ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԸ

***Մեկնարկել են /Հ-70/- Քարինջ մարզային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Այս մասին տեղեկացրել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը:***

***Ճանապարհը սկսվում է Լոռու մարզով անցնող Հ-70 հանրապետական նշանակության ճանապարհի 4-րդ կիլոմետրից եւ հասնում մինչեւ Քարինջ բնակավայր: Հիմնանորոգման շրջանակներում, վերականգնվելու է հողային պաստառը, տեղադրվելու է նոր ասֆալտբետոնե ծածկ, վերականգնվելու են նաեւ մուտքերը, իջատեղերը, մայթերը, ջրահեռացման համակարգը, կատարվելու են ճանապարհի կահավորման աշխատանքներ:***

***Շինաշխատանքներն իրականացնում է «Ճանապարհ» ՍՊԸ-ն:***

***Ֆինանսավորումը կատարվել է Հայաստանի պետական բյուջեից:***

ՑԱՎԱԼԻ ՄԻՋԱԴԵՊ

## ԱՆԴՐՈՒՇ ԻՐԻՑՅԱՆ. «ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՏԱԲԱԾՂՈՒՐԻ ԳՅՈՒՂԻՑ 6 ԿՄ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ»



*Վերջերս թբիլիսյան լրատվամիջոցներում տեղեկատվություն տարածվեց Բորժոմիի մունիցիպալիտետի Տաբածղուրի լճի, նույնանուն հայաբնակ գյուղի մոտակայքում հայտնաբերած դիակի եւ անհայտ կորած անձի մասին:*

Տեղի ունեցածի կապակցությամբ, «Վրաստան» թերթը կապվեց Բորժոմիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի Տաբածղուրի գյուղից մեծամասնական պատգամավոր Անդրուշ Իրիցյանի հետ եւ խնդրեց մանրամասնել, թե ո՞վ է զոհվել:

- Տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, բայց այն տեղացիների հետ որեւէ առնչություն չունի: Իրոք, Տաբածղուրի լճի մոտակայքում, Բակուրիանիից 30, իսկ մեր գյուղից 6 կմ հարավ-արեւելք գտնվող Շավնաբադա լեռան ստորոտում հայտնաբերվել է Չեխիայից զբոսաշրջիկի դին, իսկ մեկ այլ նույնպես չեխ զբոսաշրջիկ անհայտ կորած էր: Փրկարարական ջոկատների, ինչպես նաեւ որոնողական աշխատանքներին ակտիվորեն մասնակից մեր գյուղացիների ջանքերով, անհայտ կորած զբոսաշրջիկը գտնվեց: Համատեղ ջանքերով դուրս բերվեց զոհվածի դին: Ավելացնեմ, որ դիակի հայտնաբերման տեղեկությունն ստանալուց անմիջապես հետո, փրկարարներին ընդամենը մեկ օր պահանջվեց երկրորդ զբոսաշրջիկին գտնելու համար,- «Վրաստանի» հետ զրույցում ասաց Անդրյուշ Իրիցյանը:

ՍՊՈՐՏ

## «ԲԱԿՈՒՐԻԱՆԻ 2023». ԱՎԱՐՏՎԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ




*Մարտի 5-ին եզրագիծը հատեց Բակուրիանիում փետրվարի 18-ին մեկնարկած դահուկապարի, սնոուբորդի եւ ֆրիսկի աշխարհի առաջնությունը:*

Կազմակերպչական բարձր մակարդակով անցկացված առաջնությանը մասնակցեցին 42 երկրի 700-ից ավելի մարզիկ-մարզուհիներ: Տարբեր արժողության մեդալների արժանացան 19 երկրի մարզիկ-մարզուհիներ:

Ինչ վերաբերում է թիմային հաշվարկին, ապա 13 (3 ոսկե, 6 արծաթե, 4 բրոնզե) մեդալով աղյուսակը գլխավորեց Ավստրիայի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերը, համապատասխանաբար՝ 9-ական (3-3-3) մեդալով կիսեցին Կանադայի ու ԱՄՆ-ի թիմերը: Առաջնությունում երեք ոսկե մեդալի արժանացան նաեւ Շվեյցարիայի ու Ֆրանսիայի մարզիկները:

Բակուրիանիում անցկացված դահուկապարի, սնոուբորդի եւ ֆրիսկի աշխարհի առաջնությունում խաղարկվեց մեդալների 30 կոմպլեկտ:

## ՌԵԳԲԻ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ, «ԱՆԹԻՄՈՍ ԻՎԵՐԻԵԼՈՒ ԳԱՎԱԹԻ» ՀԵՏ ՄԻԱՍԻՆ, ՆՎԱՃԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿՉԻ ՈՒՂԵԳԻՐԸ

*Մարտի 5-ին Վրաստանի ռեգբիի հավաքականը Թբիլիսիի Ավճալայի մարզադաշտում, ռեգբիի Եվրոպայի առաջնության կիսաեզրափակիչ փուլում, հյուրընկալել էր Ռումինիայի հավաքականին: Հաղթելով 31:7 հաշվով՝ մարտի 19-ին եզրափակիչ փուլում իսպանական Բադախոզ քաղաքում կխաղա Պորտուգալիայի հետ:*

Բացի ռեգբիի Եվրոպայի առաջնության եզրափակիչ ուղեգրից, վրացի ռեգբիստները 16-րդ անգամ նվաճեցին «Անթիմոզ Իվերելիի գավաթը»: Այն խաղացվում է 2002 թվականից, վրացական կողմի նախաձեռնությամբ: Վրաստանի եւ Ռումինիայի փոխադարձ հանդիպումներում (բացառությամբ՝աշխարհի առաջնության հովանու ներքո անցկացվող հանդիպումների) ռումինացիները այս գավաթը նվաճել են 6 անգամ:

## ԲՌՆՑՔԱՄԱՐՏ. ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻՆԵՐ ԳՈՌ ԱՅՎԱԶՅԱՆԸ, ՍԱՄՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԸ, ԳՈՐԵՑԻ ԼԵՎՈՆ ԴԵՄՈՒՐՈՎԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ

*Փետրվարի 28-ից մարտի 4-ը Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուսում 13 երկրի մարզիկների մասնակցությամբ անցկացվեց Օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Դանաս Պոզնյակայի բռնցքամարտի XVIII երիտասարդական միջազգային մրցաշարը:*



ՍԱՄՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՌ ԱՅՎԱԶՅԱՆ

Մրցաշարի 13 քաշային կարգերից 9-ում հաղթողի ոսկե մեդալները նվաճեցին Վրաստանի հավաքականի ներկայացուցիչները: Մեր մարզիկներն իրենց ակտիվում գրանցեցին նաեւ 3 արծաթե եւ 3 բրոնզե մեդալներ:

«Վրաստանը» հեռախոսով կապվեց Վրաստանի վաստակավոր մարզիչ, Վրաստանի հավաքականի մարզիչներից մեկի՝ Ախալքալաքիի մարզահամալիրի տնօրեն Ատոմ Էլիզբարյանի հետ:

- Վրաստանի երիտասարդական հավաքականը, իրոք, արտակարգ հաջողության հասավ՝ 9 ոսկե, 3 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ: Հատկապես ուրախալի է, որ Ախալքալաքիի բռնցքամարտի դպրոցի երկու սաները, Գոռ Այվազյանն ու Սամվել Ղազարյանը, ովքեր ընդամենը մեկ ամիս առաջ Բաթումիում նվաճեցին Վրաստանի չեմպիոնի կոչումը, համապատասխանաբար՝ 54 եւ 80 կգ քաշային կարգերում, դարձան մրցաշարի հաղթողներ: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհավորել մարզիչներին՝ Գագիկ Էլիզբարյանին ու Վենետիկ Ղազարյանի, նրանց սաների հաջողության համար:

Ինչպես ասացի, Վիլնյուսում անցկացված միջազգային մրցաշարում Վրաստանի թիմը նվաճեց 9 ոսկե մեդալ: Բարձրագույն պարգեւներից մեկը թիմի ակտիվում գրանցեց գորեցի շնորհալի բռնցքամարտիկ Լեւոն Դեմուրովը: Նա ուժեղագույնն էր 57 կգ քաշային կարգում,- ասաց Ատոմ Էլիզբարյանն ու հավելեց, որ այսօրվա գլխավոր խնդիրն է պահպանել մեր մարզիկների լավ մարզավիճակը, քանի որ Վիլնյուսի միջազային այս մրցաշարը նախորդում է Եվրոպայի առաջնությանը, որը կանցկացվի ապրիլին, Երեւանում:



## ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված մեծ գրող: 4.Վրաց հանրահայտ դերասանուհի: 8.Հեղուկ՝ մարդու մարմնում: 9.Հորիզոնի կողմերից: 10.…-հնազանդ: 12.«… բարով, Աստված քեզ հետ, Ոտքդ քարին թող չգա» (Ավ.Իսահակյան): 16.Դրեզդենի պատկերասրահում պահվող նկարիչ Ռիբերայի կտավներից՝ Սուրբ …: 20.Հերոս «Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմում: 22.Հայ քաղաքական գործիչ, ՀՀ ազգային հերոս: 23.Քաղաքական գործիչ, դաշնակ Դրաստամատ Կանայանի կեղծանունը: 24.Վհատված, շվարած: 26.Թռչեմ, թռչես, …: 30.Ձիու մարմնի մաս: 31.Գովազդային գործակալություն Թբիլիսիում: 32.Շ.Ազնավուրի երգացանկից: 33.Մրգի տեսակ: 34.Հայոց տոմարի ամիս: 35.Որսի կենդանի: 37.Բնակավայր Երեւան-Գյումրի ճանապարհին: 39.Հայկական ֆիլմ: 42.Հայ մեծ դերասան Շերենցի անունը: 45.Նար-Դոսի վիպակի հերոս: 47.Գետի ճյուղ: 49.Շան տեսակ: 50.Ֆրանսիացի փիլիսոփա: 51.Օժանդակ բայ: 52.Խոսրով Գ Կոտակի հիմնած քաղաքը: 54.Իգական անուն: 55.Խոնավ, չչորացած: 56.Ողջը, ամբողջությամբ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Կոլումբիացի վիպագիր, սցենարիստ, լրագրող: 2.Հայ մեծ ճարտարապետ Հարությունյանի անունը: 3.Վառելանյութի տեսակ: 4.Երկաթուղային կայարան Հայաստանում: 5.Գիշերային թռչուն: 6.Զեղչող նախածանց: 7.Արեւմտահայ գրող, հասարակական գործիչ, Մեծ Եղեռնի զոհ: 11.Լեռնանցք Մեծ Կովկասի լեռնաշղթայում: 13.Աչքերը բացել-փակել: 14.Ե՛վ պաշտոն, ե՛ւ կահույքի մաս: 15.Ցուցական դերանուն: 17.Նար-Դոսի երգիչ որդին: 18.Հոգնակիակերտ մասնիկ: 19.Շ.Ազնավուրի դուստրը: 21.Բագրատունի թագավոր: 25.Բերդ-ամրոց Ախալցիխեում: 27.Հայ մեծ բանաստեղծ, ստալինյան բռնապետության զոհ: 28.Ինքնաթիռի մակնիշ: 29.Անտառում ծառազուրկ տարածք: 30.Քաղաք Լեհաստանում: 32.Հայ հայտնի աշուղ: 36.Ավազակ, թալանչի: 38.Ավտոմեքենայի մակնիշ: 40.Առարկայի հատկանիշ: 41.Սլացիկ ծառ: 42.Կայենի զոհը: 43.Արաքսի անվանումներից: 44.Ազգային հագուստ: 46.Հայկական գինի: 49.«Կուտ»-ը Սեռական հոլովում: 53.Նար-Դոսի «Ես եւ …» ստեղծագործությունը:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 7.Յաքաղան: 9.Ապրիլ: 10.Տեսք: 11.Ստնդիաց: 13.Իննոց: 16.Ավե: 17.Ռուր: 19.Բյուջե: 22.Կուզիկ: 24.Ծրագիր: 25.Կոմս: 27.Լոլիտա: 29.Էնթոնի: 32.Լայզա: 33.Պոթոսի: 35.Փշոտ: 38.Ռուս: 40.Աքացի: 41.Իմիջ: 44.Նոքա: 47.Աբե: 48.Ասեղ: 50.Միստր: 51.Կով: 52.Թո: 53.Նար: 54.Շվի: 55.Ասես:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Յախտա: 2.Գարդե: 3.Պատառ: 4.Շաքի: 5.Կրոն: 6.Ելեց: 8.Նեցուկ: 12.Նվազ: 14.Նայա: 15.Ողջի: 18.Սկոտ: 19.Բրոնզ: 20.Ուգրո: 21.Երեւի: 23.Իկիտոս: 26.Մալի: 28.Ոլոռ: 29.Էյր: 30.Թափք: 31.Նվոց: 34.Թուրքիա: 36.Շանս: 37.Տիտղոս: 39.Շիբ: 42.Մարշ: 43.Զեկի: 45.Ոմն: 46.Ասր: 48.Ավա: 49.Եթե:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445